

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ԳՐԵՑ
ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

ARMENIAN APOSTOLIC CHURCH

ՄԵԿՆԱԲԱՆԵՑ
ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ԿԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
1997

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Մեր միջնադարեան մատենագրութիւնը գերազանցապէս հոգեւոր բնոյթ ունի: Իսկ քանի որ բոլոր կարգի հայ հին դպրոցների հիմնական նպատակը Ս. Գրքի և յատկապէս Նոր Կտակարանի ուսուցումն էր. հոգեւոր գրականութեան յուշարձանների մեծ մասը Աստուածաշնչի ձին. առանձնապէս՝ Նոր Կտակարանի գրքերի մեկնութիւններն են:

Պ. Ա. Նորատունկեանն իր ամբողջ գիտակցական կեանքը նուիրել է Աստուածաշնչի գրքերի և Հայ ազգային հոգեւոր մատենագրութեան առանձին գոհարների մեկնաբանութեանը, որ նշանակում է, թէ շարունակել է մեր սուրբ հայրերի և վարդապետների գործը, ասել է թէ՛ ազգային գեղեցիկ և հոգեշահ մի աւանդոյթ, որի կարիքը ներկայ օրերին մեր ժողովուրդը ջատ ունի:

Սա հեղինակի՝ ինձ ծանօթ երրորդ գրքոյկն է (նախորդներն են՝ «Դէպի Քսանմէկերորդ Դար, Հայ Աւետարանական» և «Տէր Ռդորմեա, Խնդրանք ու Աղերս»), սակայն ինձ յայտնի է նաեւ, որ Պ. Նորատունկեանը հեղինակել է մի քանի տասնեակ այսպիսի աշխատութիւն, որոնք, անկասկած, նոյն պարզ ու անկեղծ ոգով ու ոճով բացայայտում են Ս. Գրքի տարբեր մասերի և մեր հոգեւոր գրականութեան առանձին յուշարձանների («Հաւատով Խոստովանիմ», «Առաւօտ Լուսոյ» և այլն) նրա խորաքննիչ ըմբռումները: Բայց այս մէկը, որի մէջ մեկնուած է մեծ բանաստեղծի «Եկեղեցին Հայկական» խորախորհուրդ բերթութիւնը՝ անպայմանօրէն ինքնատիպ է առաջին հերթին ընտրուած նիւթով, որ և հեղինակին արիթ է տուել արծարծելու այսօր իրեն ջատ մտահոգող կարեւոր խնդիրներ, առաջին հերթին՝ մեր ազգային միասնութիւնը, որ, անկասխ իսկապէս թուացեալ բազմաթիւ արգելքներին, Պ. Նորատունկեանը պատկերացնում է հայկական եկեղեցու հոյաշէն կառոյցի մէջ, նրա տասնեօթդարեայ կամարների ներքոյ:

Այսօր պատրաստում ենք նոյն եկեղեցու յոբելեանին, պարտաւոր ենք այս նախապատրաստութեան ընթացքում ուսումնասիրելու և հրատարակելու մեր հոգեւոր մատենագրութեան բազում անտիպ յուշարձաններից առաջին հերթին Ս. Գրոց տասնակ մեկնութիւնները, որոնց հրատարակութեամբ ոչ միայն աւելի դիւրութեամբ ենք հասկանալու մեր նախնիների հոգեւոր կեանքը՝ Աստուծոյ և աշխարհի նրանց ընկալումը, այլեւ՝ Միջնադարեան մեկնութիւնների այժմեականացման ուժով մեր ժողովուրդն աւելի

սերսօրէն է կապուելու իր հայրերին ու պապերին, դառնալու է նրանց հոգու և մտքի բնական շարունակութիւնն ու իրական ժառանգորդը: Հէնց այս իմաստով է չափազանց տեղին սոյն գրեցկի հետեւեալ պահանջը. «մեկնաբանենք ու հասկանալի ընենք աստուածաշունչ մատենագիրներն ու պահուած ձեռագիրները: Լուսաւորենք հայ հասարակութիւնն ու սնուցանենք հոգեւոր անօթիները՝ առաջնորդելով զանոնք փրկարար հոգեփոխութեան՝ «Վերստին Ծնունդ»ի:

Այս «Վերսին Ծնունդը» պէտք է լինի Սահակ-Մեսրոպեան Աստուածաշնչի բոլոր գրքերի հիմնաւոր, ներկայիս գիտութեան պահանջներին լիովին համապատասխանող գիտական հրատարակութիւններով և հետազօտութիւններով. սրան զուգահեռ, պէտք է պատրաստուեն նաեւ այդ գրքերի նոր մեկնութիւնները: Եւ պ. Նորատունկեանի ա՛յս և միւս աշխատութիւնները վերջիններիս մեծ շարքի անհրաժեշտ միաւորներն են, որոնց շնորհիւ եւս մեր ժողովուրդը պէտք է թօթափի իր դժուարութիւնները, քանզի մեր հեղինակի խորին համոզմամբ «Երկնային հրեշտակաց բանակները օգնութեան պիտի հասնին հաւատացեալ փոքրամասնութեան, չարին ամենամեծ զարմանքը այն պիտի ըլլայ, որ պիտի տեսնէ Յիսուսի հաւատարիմները ո՛չ թէ կրօնորական և հլու դիրքաւորումի մէջ, այլ՝ մարմնացեալ որոտումներ և հրեղէն բոմբիւններ՝ ճշմարտութեան, իրաւունքի և յաղթութեան»: Սա ճիշտ է, ճիշտ է նաեւ այն, որ «Ա՛յն ատեն «Եկեղեցին Հայկական»ի աղօթքն ու աղերսը պիտի փոխակերպուի ի «Երգն Յաղթութեան»:

17 Օգոստոսի 1992 թ.

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

**Վարիչ Զեռագրատան Մաշտոցի անուան
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ յԵՐԵՒԱՆ**

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ

(Գրեց Վահան Թէֆէեան)

Եկեղեցին Հայկական ծնունդավայրն է հոգւոյս,
Ինչպէս Բարայր մ'ընդարձակ, պարզ ու խորունկ, մուլթ ու լոյս.
Իր գաւիթով հիւրընկալ, իր լայն բեմով ու հեռուն
Կանգնած իր լուռ խորանով, որ կարծես նա՛ր մ'է ծրփուն . . .

Եկեղեցին Հայկական ես աչքս գոց կը տեսնեմ
Ու կը շնչեմ, կը լսեմ՝ իր Յիսուսով մանկադէմ,
Իր սեղանէն մըխացող գուլայ-գուլայ խունկերով
Եւ իր պատերը ցնցող աղօթֆներով ալեխոով . . .

Եկեղեցին Հայկական բարձր բերդն է հաւատին
Իմ պապերուս. որ հողէն զայն Բար առ Բար հանեցին
Եւ երկինքէն իջուցին զայն ցօղ առ ցօղ, ամպ առ ամպ,
Ու թաղուեցա՛ն անոր մէջ հանդարտութեամբ, հեզութեամբ . . .

Եկեղեցին Հայկական մեծ վարագոյր մ'է բանուած
Որուն ետեւ, ըսկիհին մէջ կ'իջնէ Ինքը Աստուած,
Որուն առջեւ գլխահակ կու գայ իմ ազգքս ամբողջ
Հաղորդըլի Անցեալին հաց ու գինով կենսառողջ . . .

Եկեղեցին Հայկական ծովուն դիմաց ալեկոծ
Նաւահանգիստ մ'է խաղաղ. ցուրտ գիշերին՝ հո՛ւր և բո՛ց.
Ու տօթակէզ ցերեկին անտա՛ռ մըն է ըստուերո՛տ,
Ուր շուշաններ կը ծաղկին ծարականի գետին մօտ . . .

Եկեղեցին Հայկական մէն մի Բարին տակ գետնի
Դէպի երկինք բարձրացող գաղտնի ճամբայ մը ունի . . .
Եկեղեցին Հայկական Հայ Հոգիին և Մարմնոյն
Զըրահանդերձն է փայլուն, մինչ իր խաչերն են դաշոյն

Եւ զանգակներն են բոմբիւն, և երգն է միշտ յաղթութիւն . . . :

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս Իր առաքելութիւնը չվերջացուց: Երկրէ համբարունալէ առաջ, Ան հիմնարկեց ու կազմակերպեց գործօն և Հոգեւոր բջիջ մը որ պիտի դառնար Ի՛ր Եկեղեցին: " Եկեղեցի", կը նշանակէ հաւատացեալներու հաւաք: Յիսուս ըսաւ Պետրոսի. «Այս վեմին վրայ պիտի շինեմ, Իմ Եկեղեցիս»: Եկեղեցին շինողը Յիսուս Ինքը պիտի ըլլայ և ոչ ուրիշ ոեւէ մէկը: Ան կ'ըսէ. **"Իմ Եկեղեցիս"** Մատթ. 16-13-20:

«Անտառած Հոգի է» ու զԱյն պաշտողները հոգիով և ճշմարտութեամբ պիտի պաշտեն» ըսաւ Յիսուս, ո՛չ թէ մասնաւոր քարաջէն կառոյցի մը մէջէն և ո՛չ ալ հաւաքակալութեան մը (ազգային կամ վարդապետութեան մը) մէջէն, այլ հոգիով ու **ճշմարտութեամբ**: «Եկեղեցին քարեղէն կառոյց մը ըլլալէ առաջ, Կաթողիկոսական նստավայր մը ըլլալէ շահ առաջ, ոգեկան ամբողջութիւն մըն է, մեր ժողովուրդի դարաւոր ու չարչարակոծ պատմութեան խորհուրդն է ան, որ կանգուն մնացած է ժամանակի աւերին ու փոթորիկներուն դէմ ու յաւերժութեան ճամբան ցոյց տուած է Հայոց Վեհապանծ Ազգութեան»-Գրիգոր Նգրուբեան:

Այդ քրիստոնէաշունչ մեղեդիներով օծուն միջավայրը չէ՞ր արդեօք, որ իմ մանկական հոգին պարուրեց միսթիֆ այն յուզականութիւնով, որ պիտի ընկերանար ինձի տարիներ, տարիներ, հանգրուանէ հանգրուան, կեանքիս այլազան ապրումներուն:

«Տիեզերքը տաճար է, և երկինքն է սուրբ սեղան. երկինքն անոր գմբէթն է և իր աստղերն անհամար, Աղօստ գարդերը մըթութեան»--Լամարթինի համար տիեզերք եկեղեցի է:

«Ին՛՛ւք ալ՝ ապրող քարերու պէս կը շինուիք իբրեւ հոգեւոր տաճար մը սուրբ քահանայութիւն մը, որպէսզի մատուցանե՛ք հոգեւոր զոհեր Աստուծոյ ընդունելի՛ Յիսուս Քրիստոսի միջոցով»-- Ա. Պետ. Բ. 5:

Այս քարաջէն կամ մարմարաջէն կառուցուածք մը պիտի չ'ըլլար, այլ հոգեկա՛ն: Ինչո՞ւ հոգեկան: Որովհետեւ Յիսուս ըսաւ Մամարացի կնոջ. «Հոգի է Աստուծո՛ւ, և անոր երկրպագողները պէտք է հոգիով և ճշմարտութեամբ երկրպագութիւն ընեն»--Յով. Դ. 26:

Մ Ո Ւ Տ Ք

Ներկայ բացատրականը Վահան Թեֆեեանի
“Եկեղեցին Հայկական”ի հայագիտութեան
վերլուծական բանասիրութիւն մը չէ, այլ՝
բանաստեղծին հաւատքի թռիչք տուող
մեկնաբանութեան փորձ մը:

Մտածումի ներամփոփման պահ մը, երբ
հոգին իր լուսապայծառ էջֆոյ կը ջանայ
յստակատեսութեամբ ըմբռնել իմաստն այն
բանաստեղծութեան որ ջնորհ մը եղած է
ստեղծուած արարածի մը, որ իր կարգին
կը փորձէ ըլլալ ստեղծագործ:

Վահան Թեֆեեանի անմահ **“ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ”** ը

Ալպէր Նորատունկեան
Հոկտ. 7. 1992

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Ինչո՞ւ Հայ կամ Հայկական Եկեղեցի:

Ինչո՞ւ, ոչ:

Հարեւանցի ակնարկով, կամ վերացական ու համընդհանուր տեսլականով, *ազգայի՛ն* Եկեղեցի մը սխալ հնչէ թերեւս կարգ մը Արեւմտեան եկեղեցականներու: Չէ՞ որ Զրիստոսի Եկեղեցին միջազգային է ու ազգային և լեզուաբանական սահմանում չի ճանչնար: Ինչո՞ւ անշատել Զրիստոսի Հայ Եկեղեցին համամարդկային միութենէ և անուանել զայն ազգային կամ տոհմային մակդիրով: Որովհետեւ Բիւզանդական պատրիարքութիւնը կը ջանար հայերը յոյն դարձնել, և Ասորի Եկեղեցին ալ հայերը ասորացնել:

Հռոմի, Բիւզանդիոնի, Անտիոքի և Աղեֆսանդրիոյ եկեղեցականներու միջեւ կար շատ զօրաւոր մրցակցութիւն մը, Հռոմ երբ ջանաց պահել իր "Հռոմա" անունը, Բիւզանդիոն՝ իր "Բիւզանդիոն" անունը, Աղեֆսանդրիա՝ իր "Աղեֆսանդրիա" անունը և Անտիոք՝ իր "Անտիոք" անունը, միթէ Հայաստան չ'ունէ՞ր իրաւունք կոչուելու **«Եկեղեցին Հայկական»:**

Վերոյիշեալ Եկեղեցական մրցակցութեան համար էր, որ մեր երջանակայիշատակ Մեսրոպ Մաշտոց հնարեց հայ այբուբենը: Վերոյիշեալ բիւզանդական բունատիրութեան պատճառաւ Եգիպտական բնիկ Եկեղեցին ներս ընդունեց Իւլամ բանակը: «Բիւզանդիոն կը ջանար պարպել հայութիւնը Հայաստանէն, ու տանիլ բնակեցնել բիւզանդական-յունական ջրջաններ և կամաց-կամաց տարրալուծել Հայը իր արդէն իսկ հիւանդացեալ մարմնին մէջ»--"Հող, Մարդ և Գիր", էջ 187:

Պօղոս Առաքեալ՝ երբ հաղորդակցիլ կ'ուզէ կարգ մը հաւատացեալներու հետ որոնք իրմէ հարիւրաւոր մղոններ հեռու կը գրտնրին, իր նամակը չ'ուղղէր հասարակ հաւատացեալներու, այլ կ'ըսէ, "Հռովմի Եկեղեցիին", "Կորնթոսի Եկեղեցիին", "Գաղատացւոյ" և կամ "Թեսաղոնիկեցիներու Եկեղեցիին": Պօղոս Առաքեալ, եթէ ֆարոգած ըլլար, նաեւ Հայաստանի մէջ, պիտի գրէր նամակ մը որուն մէջ պիտի կարդայինք սա բառերը, **"Առ Հայաստանեայց Եկեղեցին":**

Եկեղեցիի մը անունը կամ վերնագիրը չէ՞ որ կ'անջատէ ինքնահաւան կամ ըմբոստ եկեղեցի մը ուրիշ եկեղեցիներէ, այլ այն *հոգի՛ն* որ այդ եկեղեցիին կղերականներուն և հաւատացեալներուն մէջն է:

Ամէն ազգ հպարտանք կամ մեծանձնութիւն զգալու պատճառներ ունի: Զոր օրինակ անգլիացիները շատ հպարտ են իրենց

Ճէյֆսբիրով, Նելսընով և Ազգային Խորհրդարանով: Ֆրանսացիք հպարտ են իրենց Նափոլիոնով ու Ֆրանսական Յեղափոխութեամբ: Միթէ մեզի, հայերուս, ջա՞տ է հպարտանք կամ պարծանք զգալ մեր հաւատքի ծննդավայր Էջմիածնի "Եկեղեցին Հայկական"ով: Իրազեկ և տեղեկացեալ միտք մը սխալ պիտի չխորհի:

Ինչպէ՞ս "Եկեղեցի" բառը հայ գրականութենէն ներս մտաւ: Հայերէն՝ "Եկեղեցի" բառը, յունարէն լեզուի "Էֆլեզիա" բառէն առնուած է: Յունարէն "Էֆլեզիա" բառն ալ իր ներկայ կրօնակերպական իմաստը ստացաւ Քրիստոնէական ջարժումին պատճառաւ:

Յունարէնի մէջ, եկեղեցի բառին արմատական իմաստը, ժողովիլ կը նշանակէ, բով բովի գալ կամ հաւաքուիլ: Յիսուս Ի՛նք հիմնարկեց Եկեղեցին, այսինքն՝ ընտրեց և "կանչեց": "Միաբանութիւն" մը հաստատեց, որուն բնոյթը պիտի ըլլայ սրբակենցաղ հաւատարմութիւն առ Յիսուս Քրիստոս: Պաշտօնը՝ պիտի ըլլայ, վկայել ու լուսաւորել մարդկութեան հոգեմտածումը: Հասարակութեան հետ՝ Եկեղեցիին յարաբերութիւնը պիտի ըլլայ, անձնութեան ծառայասիրութիւն և սեր--նոյնիսկ հանդէպ իր հակառակորդներուն:

Եկեղեցիներուն պատկանելիութիւնը միայն Յիսուս Քրիստոսին է: Ան՝ Եկեղեցին կոչեց **"Ի՛մ Եկեղեցիս"**:

“Ես կ’ըսեմ քեզի, որ դուն վէմ ես, և այդ վէմին վրայ պիտի շինեմ Ի՛մ Եկեղեցիս, և դժոխքի դուռները պիտի չյաղթահարեն զայն”--Մատթ. ԺԶ. 18:

Յիսուս մասնայատուկ սահմանադրութիւն կամ կանոնադրութիւն չդրաւ Իր Եկեղեցական Միաբանութեան: Եկեղեցին ոչ քարէ տաճար մըն է ու ոչ ալ լճացեալ ճախճախուտ վայր մը, այլ *ջարժում*՝ մը սկսեալ Պէնտեկոստէէն: Սուրբ Հոգեգալուստի հրեղէն երեւոյթը անխուսափելի ըրաւ կարիքը Եկեղեցւոյ Հաւատոյ Հանգանակին և սահմանադրական կարգն ու կանոնին: Դարերու հոսանքը շատ քան փոխած է Եկեղեցւոյ կեանքին մէջ: Անփոփոխ կը մնան ու պիտի մնան.

1. Հաւատալ Աստուծոյ և Իր Միածին Որդւոյն:

“Իսկ անոնք որ ընդունեցին զայն”--Յիսուսը-- Իշխանութիւն տուաւ անոնց ըլլալու Աստուծոյ որդիներ, անոնց՝ որոնք կը հաւատան իր անունին: Անոնք ո՛չ արիւնէն, ոչ՝ մարմինի կամքէն և ոչ՝ ալ մարդու կամքէն, այլ Աստուծմէ ծնան”--Յով. Ա. 12:

Վերոյիշեալ համարը, արեւմտեան կարգ մը յարանուանական և հատուածական, մանաւանդ հեռատեսիլի ֆարոգիչները, որպէս ապացոյց կը գործածեն, համոզելու և գայթակղեցնելու հաւատք այն հայ հաւատացեալներու, որոնք թէպէտ իրենց հաւատքի և գիտութեան մէջ թերի են սակայն հաւատարիմ են իրենց Յիսուսին ու կը սիրեն իրենց Եկեղեցին:

Վերոյիշեալ համարին (Յով. Ա. 12) բացատրութիւնը:

Երբ Աբրահամ նահապետ, "Հաւատքի Նախահայր"ը, հաւատաց Աստուծոյ ու Անոր նախախնամութեան, Աստուած պատուիրեց իրեն որ թլփատուի: Իսկ երբ Աբրահամ ծնաւ իր Իսահակ որդին, առանց սպասելու որ իր զաւակը չափահաս ըլլայ և իրեն նման հաւատալէ յետոյ թլփատուի, թլփատեց իր որդին որ *հաւատքի* զաւակ էր: Նոյն պատկերը և դրութիւնը սրուած է նաեւ հաւատացեալ քրիստոնեաներուն որոնք կը մկրտեն *իրենց հաւատքով* ծնուածը՝ սուրբ ամուսնական ուխտադրութեամբ:

Պօղոս Առաքեալ Եկեղեցիներու կանոնագրութեան մէջ, կը գրէ երկմիտ և ջիւղթած հաւատացեալ ծնողներու, նոյնիսկ անոնց, որոնց կողակիցներէն ոմանք տակաւին հաւատացեալ չեն: Պօղոս Առաքեալ իր համոզման բոլոր զօրութեամբը, կ'ըսէ՝ "Եթէ կին մը ունենայ անհաւատ ամուսին մը որ ուզէ ապրիլ իրեն հետ՝ թող չձգէ իր ամուսինը. որովհետեւ անհաւատ ամուսինը *իր կնոջմով սրբուած կը հաւատարի*. սրբուած կը համարուի նաեւ անհաւատ կինը իր հաւատացեալ ամուսինով. այլապէս ձեր որդիները պիտի պիտի ըլլային, մինչդեռ հիմա *սրբուած են*" --Ա. Կոր. Է. 14:

Ինչո՞ւ խոովել միտքը ու սարսել հաւատքը այն հաւատացեալ "Եկեղեցին Հայկական"ի աւագանին մէջ մկրտուած, ու անոր սուրբ Միւռոնովը կնքուած ու շարականներովը դիտեցուած ուխտաւոր հաւատացեալներուն, որոնք տասնեօթը դարեր շարունակ հաւատարիմ գինուրեալները եղան ու պահեցին Յիսուս Քրիստոսի Լոյս Հաւատքը: Անշու՛շտ Եկեղեցին ունեցած է իր թերութիւնները, սխալները և նոյնիսկ մեղանջումները: Բոլոր հսկայ ծառերը որ կ'աճին Գալիֆորնիոյ անտառներուն մէջ, և որոնց մէջ կը գտնուին հազարաւոր տարուան երկարակեաց մայրիներ, զբօսաշրջիկներու ուխտատեղի են այսօր: Այդ երկնասալաց մայրիներու բունին վրայ, կան ջատ մը չորցած ճիւղեր, սակայն այցելուները այդ չորցած ճիւղերը կ'անտեսեն ու կը դիտեն և կը զմայլին *մայր ծառին* որ կարծես կանգնած է որպէս երկնաբարձ տիտան ու ասպարեզ կը կարողայ բնութեան խրոխտ կայծակներուն, որոտումներուն կամ որդասպան միջատներուն:

Նոյնպէս ուխտատեղի է տասնեօթը դարեր գոյատեւող
"Եկեղեցին Հայկական"ը: Անշուշտ ան կ'ունենայ չորրօր ճիւղեր
կամ աւելորդ բեռներ որոնք չեն համապատասխաներ ներկայ կարգ
ու սարքին: Սակայն, անոնք բոլորը, միշտ պիտի գտնուին երկա-
րակեաց հիմնարկութեանց մէջ: Այդ ճիւղերը կտրել մեր պարտա-
կանութիւնը չէ՛, այլ միայն Աստուծոյ: Մեր պարտականութիւնը՝
վկայել է ճշմարտութեան և լուսաւորել մեր լոյսով ու մեր սպա-
ռումով--այրուելով--այնպէս ինչպէս անմոռնջ մեղրամով մը:

Որպէս զաւակները այս անթառամ "Եկեղեցին Հայկական"ի
վստահ գիտնալու ենք մենք, թէ որդեգիր զաւակներն ենք նաեւ
Աստուծոյ: Որքան ժամանակ որ հայ հաւատացեալ անհատ մը չէ
ուրացած իր պապենական հաւատքը որ իր անխարդախ ժառան-
գութիւնն է, աստուածային շնորհով, արժանի պիտի ըլլայ լսելու իր
անուանակոչումը երանելիներու հոյլին մէջ: Իսկ առանց ուրանալու
իր հաւատքը եթէ մեղանչումներ ունեցած է ան, Յիսուս գինք բնա
չ'ուրանար այլ որպէս կորսուած ոչխար մը Իր հօտը կ'ուզէ
վերադարձնել զայն: Որպէս հաւատացեալ՝ ո՞վ կայ մեր մէջ որ չէ
մեղանչած: Նման Ա. Ներսէս Ծնորհալիի, մենք ալ կրկնենք "Հաւա-
տով Խոստովանիմ"ը որպէս ապաշխարութիւն և թողութիւն մեր
մեղաց:

2. *Վկայեցիք*, ըլլալու այն աստուածային զօրութեան որ Յիսուսով
յայտնուեցաւ:
3. Եկեղեցւոյ շինութիւնը քարերով չէ, այլ իր հաւատացեալներով
և Յիսուսը սիրողներով է:
4. Եկեղեցին իր գործունէութեան համար վստահելու է Աստուծոյ
և Սուրբ Հոգւոյն առաջնորդութեան, քան թէ իր դրամական
հարստութեանը:
5. Եկեղեցին միաբանութիւնն է անոնց՝ որոնք կամաւորապէս
ընդունած են արձանագրուիլ--շարքային ըլլալ--որպէս գերի,
ծառայ, մատակարար, պաշտօնեայ, վկայ, խոստովանահայր,
դեսպան, զինուոր և բարեկամ հաւատքի շարժումին:

Երկու բառեր որ ամենաշատ յիշուած են Նոր Կտակարանին
մէջ՝ *գերի* և *սպասաւոր*, բառերն են: Բրիստոնէական հասկացողու-
թեան մէջ, գերի և սպասաւոր բառերը չեն տար այդ վախի իմաստը
ինչ որ աշխարհակալ դասը կու տար իր գերիներուն և ստրուկ-
ներուն: Բրիստոսի գերի կամ սպասաւոր ըլլալ՝ կը նշանակէր որ
հաւատացեալ մը ի՛ր իսկ ազատ կամքով կ'ընդունի Յիսուսի լուծը որ
"Բաղցր" է և որուն *"բերը թելթել"*:

Յիսուս Բրիստոսի գերեվարութիւնը ոչ թէ ազատ ու անկախ

անհատ մը գերի կամ ստրուկի վերածել է, այլ ստրուկն ու գերին *ազատագրել՝ է*: Այն բոլոր մեղքի գերի ստրուկները՝ որ Յիսուսով ազատագրուած են, իրենց անկախ կամֆոլը կը հետեւին Յիսուսի որ կրկին գերի չդառնան սատանայի խաբէութեան: Իրենց ապաւենն ու ապաստանարանը Յիսուսի մօտ կը գտնեն:

ԾՆՆՆԴԱՎԱՅՐՆ Է ՀՈԳԻՈՅՍ

Մարդիկ ի՞նչ մեծ պարծանքով կ'արտայայտուին իրենց ազգային ծննդավայրի կամ հայրենիքի մասին: Երբեք սխալ չէ պարծենալ նաեւ մեր հոգեկան ծննդավայրով: Միայլ է *անարգել*՝ ուրիշի մը ծննդավայրը:

Ինչո՞ւ:

Որովհետեւ բացարձակ ուրիշի՝ մը կամֆոլ և միջամտութեամբ է որ կ'որոշուի մեր ծննդագործութիւնը, մեր հայրենիքը, մեր լեզուն և մեր ազգականական կապը: Իսկ երբ կու գայ հարցը մեր հոգեկան ծննդավայրին, այդ ծննդավայրը կ'որոշուի մեր անհատական կամֆոլը, մեր ինքնորոշումով: Ազատութիւնը ունինք շարունակելու, և հաւատալու այն կրօնքը, սիրելու այն Յիսուսը որ մեր կամֆոլ պիտի որոշէ:

Անձեր կան այս աշխարհի մէջ, որ մէկէ՛ աւելի լեզուներ կը խօսին, տարբեր մշակոյթներէ հաճոյք կ'առնեն, տարբեր ազգութիւններու հետ կը յարաբերին: Ինչպէ՞ս կարելի է այս անձերուն մայրենի լեզուն ճանչնալ: Ճանչնալու միջոցը, հարցնել է այս անձերուն թէ ի՞նչ լեզուով կ'աղօթեն:

Երբ հայ հաւատացեալ մը "Եկեղեցին Հայկական"էն ներս մտնէ, և իր հոտառութիւնը անուշահոտ խունկին բուրմունքը ներշնչէ, և իր ականջները լսեն Ա. Պատարագի երգեցողութիւնները որ Ա. Ն. Ծնորհալիի հոգեպարար աստուածատեսութեամբ յղացուած են, արդէն այդ հաւատացեալը ծնրադիր ընդունած է ու կը վկայէ իր հոգւոյն ծննդավայրը:

Մակայն, պիտի ըսեմ դժբախտաբար, կան նաեւ անձեր մեր մէջ, որոնք փոխած են իրենց հոգւոյն ծննդավայրը դէպի ազգայնամոլութիւն, ջահամոլութիւն և եսամոլութիւն: Ասոնք բոլորովին կորսուածներ չեն, այլ միջոտ յոյս մը կայ որ ապաշխարելով վերադառնան իրենց հոգւոյն ծննդավայրը, ուր Յիսուս բազկատարած կը սպասէ իրենց:

ԻՆՉՊԷՍ ՔԱՐԱՅՐ ՄԸՆԴԱՐՁԱԿ

Մեզմէ Բանինե՞ր ունեցած են առիթ մտնելու Բարայր մը: Ես քախտաւորութիւնը ունեցած եմ մտնել տասնեակէ աւելի մեծ և անծայրածիր Բարայրներէ ներս:

Քարայր մտնելը կը նմանի ինֆզինֆդ գգալ անդրջիրիմեան աշխարհի մը մէջ: Քարայրի բացարձակ լուռութեան մէջ, անջատուած արտաքին աշխարհէն, կարծես մտային և հոգեկան խաղաղութեան մէջ կը թաղուիս: Եթէ այդ խաղաղութեան մէջ թոյլչֆ և ազատութիւն տաս Բու խորհուրդներուդ, գգացումներուդ և կամֆիդ, տարբեր անձ մը եղած և կերպարանափոխուած դուրս կու գաս Բարայրէն:

ՊԱՐՋ ՈՒ ԽՈՐՈՒՆԿ

Երբ հաւատացեալ մը ծունկի եկած ու հոգեկան խաղաղութեան մէջ ընկղմած է, եկեղեցական ջատ մը աւելորդապաշտութիւնները անտեսանելի կը դառնան իրեն: Իր յափշտակուած սեւերումները կը դիտեն միայն կենսականը և էականը՝ Յիսուս Քրիստոս: Այդ Բարանձաւի հսկայ տարածութեան մէջ, իր տեսողութենէն կը վրիպին արուեստի հիաստանչ նկարչութիւնները, Բանդակները և ձեռարուեստը: Հաւատացեալին արգաւանդ և թելադրական խորհուրդները, Աստուած կը ցոլացնեն իր հոգւոյն հորիզոնին վրայ: Խորախորհուրդ պարզութեան մէջ իր միակ տպաւորութիւնն է Յիսուս Փրկչին իրեն ջնորհած մեղաց թողութիւնը որ կը դողանջէ իր ականջներուն, ըսելով.

*“Որդեակ, Բու մեղքերդ ներուած են Բեզի:
Գնա՛ ու աչուհեան մեղք մի՛ գործեր”:*

ՄՈՒԹ ՈՒ ԼՈՅՍ . . .

Ինչպէ՞ս կարելի է թէ՛ մութ և թէ՛ լոյս ըլլալ:

Մթութիւնը անկենդանութիւն և մահ կը նշանակէ: Լոյսին էութիւնը կամ իսկութիւնը խաւարին և մահուան յաղթանակն է: Մտէֆ մութ սենեակ մը և վառեցէֆ մոմ մը, այդ խաւարը որ մութ էր ոչ թէ կը փճանայ կամ կը կորսուի, այլ՝ լոյսի կը վերածուի: Խաւարը հոն է, մթութիւնը չէ կորսուած, միայն *պարտուած* է լոյսէն: Լոյսին կենթարկուի կամ կը հնազանդի: Կարելի չէ հսկայ խաւարի մը օժանդակութեամբ մարել պզտիկ մոմի լոյս մը: Մակայն կարելի է ամենամութ խաւարին մէջ մոմ մը վառելով խաւարը

լուսաւորել:

Կուզե՞ս *"Եկեղեցին Հայկական է"* էն մութը վանել և զայն միշտ լուսաւորեալ տեսնե՞լ: Վառէ՛ Լուսաւորչի Կանխեղը, որ դուն ինքն ես: Եթէ, դու՛ն, մեղրամոմի նման չգոհուիս չի սպառիս այրուելով, անկարելի է որ "հոգւոյդ Ծննդավայրը" լուսաւորես: Լոյս ըստածը ոչ իւղն է և ոչ ալ պատրոյգը, այլ՝ *այրուիլն* է, գոհուիլն է, ճենճերիլն է ինչպէս մեր նարեկացիներն ու ճնորհալիները երգեցին ու քերթողեցին: Առանց երկունքի--ցաւի և տառապանքի--ստեղծագործութիւն չի կայ:

Դադրեցուր բու գոհողութիւնդ ու նուիրումդ նոյնիսկ մէկ վայրկեան, ով հայ հաւատացեալ, ու մութն ու խաւարը կրկին պիտի արջաւեն ու գրաւեն "Եկեղեցին Հայկական"դ:

Մինչեւ Գալուստը մեր Փրկչին Յիսուս Քրիստոսի, մեր միակ կոչումն է գոհուիլ ու գոհել, այրիլ և այրուիլ մեր հոգւոյն Ծննդավայրը եղող Էջմիածնին որուն իւրաքանչիւր քարն ու աղիւսը կը ներկայացնէ կենդանի ու խօսուն հաւատացեալ մը:

ԻՐ ԳԱԻԻԹՈՎ ՀԻԻՐԸՆԿԱԼ

Սուրբ Էջմիածնի յայտնած և յայտարարած Աստուածը կը տարբերի բոլոր միւս կրօններու աստուածներէն՝ գլխաւորապէս սա կէտին մէջ: Ազգաց պատմութեան մէջ՝ մարդիկ ու հաւատացեալներ, պարտաւոր կը գգային *հաճեցնել* իրենց աստուածները: Բասական վաղեմի աստուածները կանգնած էին որպէս *դատաւորներ*: Մեր երկնաւոր Հայր Աստուծմէ գատ բոլոր աստուածները *վրէժխնայի* էին, *նախանձուս* ու *մահաւ*: Յիսուս Քրիստոսի հարազատ յայտնաբերումով, մարդկութիւնը ճանչցաւ *սիրող, ներող հիւր-ընկալ* Աստուած Ճշմարիտը:

Յիսուս, ոչ միայն փոխակերպեց մեր ըմբռնումը խոժոռ աստուածային դիմագիծէն դէպի սիրոյ Աստուած, այլ նաեւ մեր սխալ աստուածճանաչումը: Մեզ մեր նախապաշարումներէն ազատագրեց և մեզի յայտնեց Ճշմարիտ Աստուածը, երկնաւոր Հայրը որպէս մեր վրայ գուրգուրացող ու մեզ փնտրող Հովիւ Աստուածը: Նոյնիսկ թողելով իննիսուն ինը, որ գտնէ Իր մէկ հատիկ կորսուած գառնուկը: Ա՛յս պատճառաւ "Եկեղեցին Հայկական"ի գաւիթը հիւրընկալ է և "բեմը լայն":

ՈՒ ԶԵՌՈՒՆ ԿԱՆԳՆԱԾ ԻՐ ԼՈՒՌ ԽՈՐԱՆՈՎ

Եկեղեցւոյ խորանը միշտ լուռ է և լուռ ալ պիտի մնայ: Հանդիպած է՛ք հօր մը, որուն զաւակը առեւանգուած է: Հօր մը, որ իր զաւակը կը փնտռէ: Հօր մը, որ իր հարազատ զակին վերադարձին կը սպասէ: Այն հօր նման, որ իր "Անառակ Որդւոյն" վերադարձին կը սպասէր: Միթէ կարելի՞ է հօր մը համար իր վիշտը թաղել կերուխումի և խնճոյքի մէջ, կամ պարի և երաժշտութեան մէջ երբ իր հարազատը պատանդ է թշնամի կառավարութեան մօտ, կամ կորսուած անտառներու մէջ: Ո՛չ երբեք:

Աստուծոյ ստեղծած մարդն ալ նմանապէս առեւանգուած է չարին կողմէ, մեղքին կողմէ, անառակութեան կողմէ, բանասարկուին սաղրանքներուն կողմէ, "մեղքի պարաններով կաշկանդուած":

Աստուած՝ Իր լուռ խորանով արցունքաբեր սպասումի պահեր կ'անցնէ, որպէսզի մեզի նման անառակ որդիները վերադառնան դէպի տուն, փրկութիւն, թողութիւն և հաշտութիւն:

ՈՐ ԿԱՐԾԵՍ ՆԱ՛Ւ Մ'Է ԾԸՓՈՒՆ . . .

Եկեղեցին չայկականը՝ մեռած, լճացած, տիղմախառն, կամ խարխլած հիմնարկութիւն մը չէ: Ընդհակառակը, ծփուն, կենսալից, կենսուրախ և կենսանորոգ նաւ մըն է ան: Նաւ մըն է ան, որ ծովուն անհունութեան մէջ իր ճամբան կը գտնէ դիտելով երկնային լուսապսակ աստղերը մութին՝ ու ճջմարտութեան Արեգակը ցերեկւան լոյսին: Նաւ մըն է ան՝ որուն դեկը, այսֆան երկար դարեր, դեկավարուած է Յիսուս Քրիստոսի որկած Սուրբ Հոգիին միջոցաւ: Նաւ մըն է ան՝ որուն ճամբորդութիւնը սկսած է Պէնտէկոստեով ու Իր նաւահանգիստը պիտի հասնի Յիսուսի երկրորդ Գալուստեան: Նաւ մըն է ան՝ որուն ճամբորդները գտած են կեանքի իմաստն ու նաեւ մեղքերու թողութիւնը:

ԵՍ ԱԶՔԸՍ ԳՈՅ ԿԸ ՏԵՍՆԵՄ

Աշխարհի վրայ միայն պզտիկ ձեռնարկները աչքով կը տեսնուին, իսկ մեծ հիմնադրութիւնները, զոր օրինակ, հսկայ կամուրջներ և երկնաքարձ ջէնքեր միայն *միտմոյ* կը տեսնուին կամ կ'ըմբռնուին:

Երբ զմայլելի երաժշտութիւն մը մտիկ կ'ընենք, մեր աչքերը կը գոցենք որ կարենանք տեսնել այդ մեղեդիին պատկերած երկնա-

գեղ տեսիլքները ու նկարագրողումը մեր հոգիներէն ներս:

Երկու հարիւր տարիներ առաջ, երբ Մոցարդ կը յօրինէր իր օփերաները և երաժշտական անմրցելի երգագրութիւնները (composition), պատահեցաւ որ այդ ձեռագիրները կարդացուին իր հակառակորդ մրցակիցին կողմէ: Հակառակորդին ամենամեծ գարմանքը այն եղաւ, որ այդ ձեռագիրներուն մէջ մէկ հատ սրբագրութիւն իսկ չկար: Մոցարդ արձանագրած էր տառ առ տառ այն անտեսանելի և հիասքանչ մեղեդիները գոց աչքերով, որովհետեւ այդ ֆաղցրանուագ ձայները կ'երեւին ու կը լսուին միայն մտքի և հոգիի խորհրդագագաց աչքերով:

"Աչքը գոց" տեսնել կը նշանակէ նաեւ **"հաւատալ"**: Յիսուս, այս աջխարհէն դէպի Հօրը համբառնալէն առաջ Միաբանութիւն մը, խմբակցութիւն մը ընտրեց և զանոնք անուանեց **"Երանելիներ"**:

Որո՞նք կրնային ըլլալ այս անուանացանկին անդամները արդեօք:

Յիսուս շատ որոջ կերպով խօսեցաւ այս խումբին անդամակցողներուն առաքինութեան մասին.

«Իսկ թողմաւ, Ձիս տեսար՝ հաւատացիր. երանի՜ անոնց որ տեսած չեն ու կը հաւատան»--Յով. Ի. 29:

Ահա նոր Միաբանութիւն մը "Երանելիներու" որոնք առանց տեսնելու Յիսուսի Յարութիւնը--թէեւ գոց աչքով--սակայն կը հաւատան ու կը յայտարարեն.

«Յիսուս Քրիստոս Յարեալ ի Մեռելոց»:

ՈՒ ԿԸ ԶՆՉԵՄ

Ինչպէս ձուկերը իրենց ձկնականջներով կը ջնջեն ու ջուրէն թթուածին կ'ստանան, մարդիկ և կենդանիները իրենց թոքերով կը ջնջեն օդային թթուածինը: Նոյնպէս՝ հաւատացեալներն ալ անհրաժեշտօրէն պէտք ունին ջնջառութեան:

Հաւատացեալին ջնջառութիւնը՝ աղօթքը աստուածային Հոգին է:

1. "Մենք ոչ թէ այս աջխարհի հոգին առինք, այլ ան հոգին՝ որ Աստուծմէ է"--Ա Կոր. Բ.12:
2. "Զանի որ դուք չառիք ծառայութեան հոգին վերստին երկիւղի մէջ իյնալու համար, այլ առիք որդեգրութեան հոգին՝ որով կ'աղաղակենք. **Աբբա Հայր**"--Հռով. Ը. 15:
3. Եթէ Հոգիով կ'ապրինք՝ Հոգիին համեմատ ալ ընթանանք"--Գաղ. Ե. 25:

Կարելի՞ է որ անձ մը առանց շնչառութեան ապրի:

Պատասխանը՝ ընթերցողին կը թողում:

Եւոյնպէս՝ միթէ կարելի՞ է առանց Աստուծոյ Հոգւոյն առաջնորդութեան ապրիլ: Կարգ մը հիւանդներու՝ արուեստական միջոցներով ջունչ կու տան: Մեզմէ քանիներ արդեօք այդպէս ապրիլ պիտի փափաքին որպէս Հայ Եկեղեցականներ:

Ուստի մտնենք մեր ներքին սենեակը, գոցենք դուռը և աղօթենք Հօր Աստուծոյ որ անպակաս ընէ մեզմէ *Իր Հոգին*: Ծնչե՛նք աստուածային այս Սուրբ Հոգին մե՛ր տան մէջ, մե՛ր գործին մէջ, մե՛ր յարաբերութիւններուն մէջ, ըլլայ ջուկան կամ ըլլայ մեր ընկերային կեանքին մէջ: Թող աստուածային Հոգիին ներկայութիւնը վկայութիւն մը ըլլայ մեր ապրո՛ւմի վարքի՛ն ու փառքի՛ն մէջ:

ԿԸ ԼՍԵՄ՝

Ծատ սովորական վիճակ մըն է մարդկային ընկերութեան մէջ ունենալ կարգ մը բարեկամներ որոնց այցելութիւնը կամ յարաբերութիւնը ջատ հաճելի չի թուիր: Պատճա՞ռը՝ որովհետեւ բնաւ չեն լսեր, մտիկ չեն ըներ բեզ, ջարունակ իրե՛նք կը խօսին որպէս մեքենայ:

Երբ հայ հաւատացեալ մը ջնչէ Սուրբ Հոգին ու ներշնչուի, իր աղօթքը Աստուծոյ հետ մենախօսութիւն մը չըլլար, այլ սիրոյ յարաբերութիւն մը, ուր Աստուած ալ կը խօսի ու կը յայտնէ խորհուրդներու յայտնութիւններ, տեսիլներ ու կեանքի մէջ պատահելիք, ու մանաւանդ ապագայի Իր ծրագիրները: Ունկնդրելով Աստուծոյ, հաւատացեալը կը դառնայ խանդավառ, ներշնչուած և տեսանող:

Աղօթե՛նք Աստուծոյ, ու նաեւ *սպասենք* Իրեն, իմանալու նաեւ Իր ձայնը, որ կարենանք տեսնել մեր ճամբան ու զանազանել չարը բարիէն:

ԻՐ ՅԻՍՈՒՍՈՎ ՄԱՆԿԱԳԷՄ

"Մանկադէմ" բառը մեզ երբեք պէտք չէ տպաւորէ որ Յիսուս Զրիստոս մանուկ մըն է, երախայ մըն է: Այս չի նշանակեր որ Յիսուս մանկական ջրջան մը չէ ունեցած: Այլ՝ ինչպէս Սուրբ Աւետարանները մեզի կը պատգամեն, Յիսուս մարդոց յայտնուեցաւ

Իր հասուն տարիքին: Յիսուսի՝ մանկական, պատանեկան կամ երիտասարդական շրջանը մեզի չէ պատմուած, ոչ թէ խորհրդաւոր պահելու համար, այլ որպէսզի աշխարհ ճանչնայ Յիսուսը որպէս Աստուածաբան և Միածին Որդի: Յիսուս Զրիստոսի մանկութիւնը կամ երիտասարդութիւնը մեզ պէտք չէ հետաքրքրէ, որովհետեւ, նախ՝ Յիսուս եկաւ Առաքելութեան մը, Դեսպանութեան մը համար: Երկրորդ, Յիսուսի մանկութիւնն ու երիտասարդութիւնը Իր գոյացութեան սկզբնաւորութիւնը չէր, այլ Իր **Մարդեղութեան** սկզբնաւորութիւնը: Իր իսկական սկզբնաւորութիւնը՝ Հօրը ծոցին մէջն էր, երբ ժամանակը գոյութիւն չ'ունէր,

«Ակօզէն էր Բանը, և Բանը Աստուծոյ Բով էր»--Յով. Ա.1:

Ուրեմն ի՞նչ կը նշանակէ "մանկադէմ": "մանկադէմ" կը նշանակէ "դիւրահաղորդ", Մարդիկ աւելի ազատ կը զգան խօսելու դրացիներուն տողոց, գան թէ անոնց ծնողացը: Մանուկի մը դէմքին վրայ կարծես գրուած ըլլայ սա խօսքերը, "սիրէ գիս, համբուրէ գիս, խօսէ ինձ":

Մօտեցումի այս դիւրահաղորդ հոգին է որ կը ցոլայ Յիսուսի դէմքին վրայ: Յիսուսի դէմքին այս հմայագեղ ու Բաշողական գօրութիւնն էր որ աշակերտները Բաշտեց Իրեն:

Յիսուսի առինքնող Դէմքն էր որ "Վերստին ծնունդ" շնորհեց Զակէեոս մաքսաւորին և դարձուց զայն կարեկից և մարդասէր:

Յիսուսի մանկադէմ և մաքրամաքուր նայուածքն էր որ ապաշխարութեան առաջնորդեց մեղաւոր Մարիամ Մագթաղենացին, որ նաեւ դարձաւ առաջին աւետարանչուհին Անոր Յարութեան:

Անգամ մը եւս, գոցենք մեր աչքերը և նայինք Յիսուսի մանկադէմ ու չափահաս անձնաւորութեան մեր աղօթքի պահուն, հո՛ն պիտի տեսնենք ու զգանք Իր ջօշափելի ներկայութիւնը ու պիտի սրբվինք աղօթել նման Ա. Նարեկացիին.

«Այ թէ տուրբին՝ այլ տուողին կարօտն ու նիւմ. փառքը չէ որ անձկալի է ինձի, այլ փառաւորութիւնը՝ համբուրելի. ոչ թէ կեանքին փափաքովը, այլ կենարարին յիշատակովն է որ կը ճենճերիմ միջտ. ոչ թէ վայելքին տարիանմովը կը հեծեմ, այլ պատրաստողին տենչանմովը երիկամու նիս խորէն կը ճուսմ, հանգիստը չէ որ կը փնտռեմ, այլ հանգչեցնողին երեսը կ'աղաչեմ. ոչ թէ հարսնարանին խնճոքով՝ այլ փեսային անձկութեամբը կը մաշիմ: Եւ Իր զօրութեանը վրայ վստահօրէն յուսալից . . . աներկբիտ յոյսով կը հաւատամ . . . ոչ միայն Բաւութեան հասնիչ, ալ՝ նոյն Ինքը տեսնել.--Գր. Նարեկացի--Բան ժԲ

ԻՐ ՍԵՂԱՆԷՆ ՄԸԽԱՅՈՂ ԳՈՒԼԱՅ-ԳՈՒԼԱՅ ԽՈՒՆԿԵՐՈՎ

Մերօրեայ գրասեղաններու վրայէն վերցուած են կադամարներն ու փետրագրիչները և անոնց փոխարէն գետեղուած են հեռատիպ (fax) և համակարգիչ (computer) կոչուած կայծակնառափ և հրաշագործ կազմածներ: Ներկայ հրաշագործութեամբ՝ մարդիկ ոչ սպասաւորներու պէտք ունին և ոչ օգնականներու: Առանց իրենց աթոռներէն ջարժելու, միայն կոճակ մը սեղմելով կրնան տեղեկութիւններ հաւաքել հազարաւոր մղոններ հեռու պատահած դէպքերու, հաջիւներու և անձերու մասին: Ոչ թէ միայն զանոնք կրնան տեսնել, այլ անոնց հետ խօսիլ ալ:

Երբ հարիւրաւոր կամ հազարաւոր հայ հաւատացեալներ համախմբուած աղօթեն մէկ նպատակաւ, միասնական հոգիով, անկեղծութեամբ, սրբակենցաղ նուիրումով և իրենց Յիսուսին հանդէպ ունեցած սիրովը, այդ աղօթքը այլեւս անտեսանելի և վերացական ըլլալէ կը դադրի, և խառնուելով միացող և քաղցրաբոյր խունկին, կը դառնայ ջօջափելի և տեսանելի: Ինչպէս "Եկեղեցին Հայկական"ի խորանը, նոյնպէս Երկնախորանի Մեղանին վրայ Յիսուս ականատես կ'ըլլայ բոլոր աշխարհի Իր հաւատարիմ ուխտաւորներուն խնդրանքներուն և աղերսանքներուն: Իր սեղանին "գուլայ-գուլայ" խունկերուն մէջ, Ան կը գիտակցի Հայ Եկեղեցականներու կարօտութեան և կ'իմանայ անոնց աղօթքը:

ԵՒ ԻՐ ՊԱՏԵՐԸ ՅՆՅՈՂ ԱՂՕԹՔՆԵՐՈՎ ԱԼԵՒՌՈՎ . . .

Ուսումնատենչ ու գաղափարապաշտ հաւատացողին աղօթքը, միշտ նոյն յանկերգը չ'ունենար: Աղօթքներ կան շնորհակալութեան համար որ փառաբանութիւններ են ստացուած բարիքներու և պարգեւներու: Աղօթքներ կան ապաշխարանքի և մեղքերու թողութեան համար: Աղօթքներ կան պարզապէս մտերմիկ և սիրալիր յարաբերութեան համար: Աղօթքներ կան նաեւ ներշնչումի, ոգեւորութեան և խանդավառութեան:

Կեանքի փորձառութեան մէջ այնպիսի ճակատագրական վիճակներ ու հանգրուաններ կան, ուր ստեղծուածին և Ստեղծողին յարաբերութիւններն ու ջիւղմները ոչ միայն եկեղեցւոյ քարէ պատերը կը ցնցեն, այլ երկնակամարի անհունութեան մէջ, փայլակներ

ու որոտումներ կը ստեղծեն: Ինչպէս Յիսուսի վերջին աղօթքը Խաչին վրայ: Խաչին վրայ երբ Յիսուս աղաղակեց «**Էլի Էլի Լամա սապաֆղանի**»ն ոչ թէ Իր աղաղակը սարսեց ու ցնցեց տաճարին քարերը, այլ վերէն վար պատառեց խորանին վարագոյրը: Արեւը խաւարեցաւ, աստղերը անյայտացան, ու երկիր իր հիմերէն սարսեցաւ ու տիեզերքը իր որոտումներով ու կայծակներով, իր սարսուռն ու երկիւղը արտայայտեց:

Երբ Յիսուս Գեթսեմանի պարտեզին մէջ կ'աղօթէր և կը մենամարտէր Իր անձին և կամփին հետ, Իր քրտինքի կաթիլները ջիթ առ ջիթ կը կաթէին հողին վրայ նման արեան կաթիլներուն: Յիսուսի աղօթքը այդ պահուն ոչ թէ կը ցնցէր տաճարին պատերը, այլ՝ այն Մարմնեղէն Տաճարը որ Յիսուս Ինքն էր: Այդ իսկ պատճառաւ Իր քրտինքը՝ նմանութիւնն ստացաւ արիւնի:

ԲԱՐՁՐ ԲԵՐԳՆ Է ՀԱՒԱՏՔԻՆ ԻՍ ՊԱՊԵՐՈՒՄ

Բերդ՝ նշանակ է ապահովութեան: Ազգերու, ժողովուրդներու և անհատներու բերդերը՝ իրենց հարստութիւնը եղած է: Ճէնկիզ Խանին բերդը՝ իր մոլեգին ու սադայելական ոճիրները եղած են: Ուրիշներու ամրոցը իրենց աղուեսաբարոյ, կեղծաւոր և նենգադաւ բնաւորութիւնը եղած է:

Հայ Եկեղեցականին "Բարձր Բերդը"՝ եղած է իր Լոյս Հաւատքը և վստահութիւնը առ Աստուած: Որպէս ապացոյց, դիտենք յարութիւն արած կմախքաբայլ հայ հաւատացեալները, որոնք կու գան Տէր Զօրի կիզիչ անապատներէն: Անոնք չմոռցա՛ն Հայ Եկեղեցին և չ'ուրացա՛ն իրենց "պապերուն հաւատքը":

Հայր՝ հայ պահող գործօն ազդակը միշտ եղած է իր հաւատքը առ Աստուած, և իր դարաւոր Զրիստոսաբոյր մշակոյթը որ կերտուած է Մեսրոպաշունչ սրբազան նուիրումով և ջրուած Մամիկոնեան արիւնով. և կնքուած Սուրբ Հոգւոյ հեղումով: **Ապրէ՛** ով Հայ և գոյատեւէ՛ յաւերժօրէն որպէս Հայ-Զրիստոնեայ:

ՈՐ ՀՈՂԷՆ ԶԱՅՆ ՔԱՐ ԱՌ ՔԱՐ ՀԱՆԵՑԻՆ

Եկեղեցին Հայկականը մեզի չհրամցուեցաւ որպէս ժառանգութիւն, որպէս՝ նախաքրիստոնէական դարերէն մնացած հարստութիւն ճոխութեամբ և առատութեամբ որ ընդարձակէինք մեր հայրենի հողերը:

Հայ Ազգը և հայ անհատը ջատ հպարտ է որ իր ու իրեն հարա-

զատները արժանաւորութիւնը և պատիւը ունեցած են հաւատալու՝ և կերտելու՝ չայ եկեղեցին այն՝ հասկացողութեամբ և այն՝ գիտակցութեամբ, որ յաւերժօրէն Ան խօսի չայ սրտին, հոգիին և մտքին:

ԵՒ ԵՐԿԻՆՔԷՆ ԻԶՈՒՅԻՆ ԶԱՅՆ ՅՕՂ ԱՌ ՅՕՂ, ԱՄՊ ԱՌ ԱՄՊ

Ինչպէս երկրի սրտէն հանեցին քար առ քար, այսինքն մարդկային խորհուրդի և որոնումներու ներաշխարհէն, նոյնպէս նաեւ իջուցին շինութեան ու կարուցման տարրերը, Ա. Շնորհալիի սրբազան բանաստեղծութիւնները երկինքէն՝ չօր Աստուծմէ:

"Եկեղեցին չայկական"ը որքան ալ նման ըլլայ իր քոյր եկեղեցիներու որոնք տարածուած են աշխարհի վրայ, Ան ունի իր ուրոյն դիմագիծը և իր չայկականութիւնը:

Ինչո՞ւ:

Որովհետեւ չայաստանեայց եկեղեցին յօրինուեցաւ հայ ներաշխարհէն բխող անսպառ մտածումներէ ու տեսիլքներէ: Այն մտածումները որոնք խորհուրդ տուին հայ դպիրին ու կղերին, իրենց կարգին, շնորհներ էին **"Էմմանուէլ"**էն, որ ըսել է "Աստուած մեր մէջ": Որովհետեւ հայ հաւատացեալը զԱստուած իրեն **դիմակ** մը չէ ըրած, այլ՝ **ապրո՛ւմ, կեա՛նք և վարժութիւն:**

"Եկեղեցին չայկական"ը՝ իր ճարտարապետութեամբ, դպրութեամբ և խորհուրդով եղաւ ազգապահպանման և հաւատապահպանման "Կենաց Նա"ը, և գոյութեան ազդակը, որ ստացած էր իր յատակագիծը իր "Էմմանուէլ" ներաշխարհէն և իջուցած զայն Աստուծոյ Թագաւորութենէն "ցօղ առ ցօղ ու ամպ առ ամպ":

ՈՒ ԹԱՂՈՒԵՑԱ՛Ն ԱՆՈՐ ՄԷԶ ՅԱՆԳԱՐՏՈՒԹԵԱՄԲ, ՅԵԶՈՒԹԵԱՄԲ

Այստեղ՝ "Թաղուեցան" բառը, բնաւ երբեք մեռնիլ չի նշանակեր: Չայեր՝ եգիպտոսի Փարաոնները չեն ու ոչ ալ "Եկեղեցին չայկական"ը Բուրգերը: "Թաղուեցան" բառը հոս՝ կը նշանակէ "ըմբռնել" կամ "նոյնանալ": Ինչպէս Յիսուս Երուսաղէմի Տաճարը Իր Մարմնին կը նմանցնէ, նոյնպէս ալ քրիստոնէական բանաստեղծ Վահան Թեֆէեան՝ իր մարգարեաշունչ քերթողականութեամբ ըսել կ'ուզէ թէ՛ հայուն համար կրօնքն ու հաւատքը՝ Եկեղեցին ու դպրեկանքը պատմութեան մը չէ՛, դիմակ մը չէ՛ այլ իսկութիւն մըն է՝ ճշմարտութիւն և ապրո՛ւմ:

ՄԵԾ ՎԱՐԱԳՈՅՐ Մ'Է ԲԱՆՈՒԱԾ

Գտնուած է՞ թատերասրահ մը ուր վարագոյրը տակալին գոց է ու չէ՞ կրնար տեսնել ինչ կ'անցնի կը դառնայ անոր ետին:

Գտնուած է՞ ամայութեան մը մէջ ուր կը բարձրանայ հոյակապ դղեակ մը, սակայն անոր ներսը չէ՞ կրնար տեսնել որովհետեւ պատուհանները ծածկուած են վարագոյրով:

Նոյնն է նաեւ Եկեղեցին չայլականը: Իր բոլոր պարզութիւններուն մէջ ունի նաեւ իր *խորհրդաւորութիւնը*: Հարեւան ակ նարկով ջատ պարզ կը կարծուի ըլլալ ան: Սակայն որքան մօտէն ֆննես ու դիտես, այնքան աւելի խորունկ և խորհրդապաշտ կը դառնայ:

Ինչպէս թատերասրահին և դղեակին վարագոյրները մեր հետաքրքրութիւնը ջարժած էին բայց անորոջ և առկախ ձգած մեր երեւակայութիւնը՝ նոյնն է նաեւ կրօնահաւատքի գիտելիքները և խորհուրդները: Մինչեւ որ չբացուին մեր աչքերը կամ չբացուի վարագոյրը, անկարելի է որ երկրածին էակ մը կարենայ տեսնել դէպքերն ու իրականութիւնները որ կան վարագոյրին ետին: Այս պատճառաւ այն բոլոր անձերը որոնք կը յաճախեն Եկեղեցի որպէս հանդիսատես, և ժամանակ անցնելու, կամ որպէս զբօսավայր առանց իրենք զիրենք դերակատարներ ընելու, կը մնան անգէտ իրենց երեւակայութեան, և ջփով իրենց դատողութիւններուն մէջ:

Այս պատճառաւ մեր Տէրը Յիսուս Բրիստոս խոստացաւ Իր աշակերտներուն ըսելով.

«Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ասկէ ետեւ պիտի տեսնէ՛ք երկինք բացուած».-Յով. Ա. 51:

Ուրիշ առիթով, Յիսուս նորէն կը կրկնէ Իր աշակերտներուն ըսելով.

«Ձեզի՛ տրուած է երկինքի արքայութեան խորհուրդները գիտնալ, իսկ անոնց տրուած չէ».-Մատթ. ԺԳ. 11:

Ինչո՞ւ այս խորութիւնը:

Յիսուս Բրիստոս ոչ թէ աչառութիւն կ'ընէ, այլ բոլոր անոնք որոնք իրենք զիրենք կը մեկուսացնեն Իրմէ և չեն ուզեր ստանձնել Իր առաքելութեան դրական դերը կամ պատասխանատուութիւնը՝ զրկած կ'ըլլան իրենք զիրենք իրական կեանքի և աշխարհի դերակատարութեան իրագործման մէջ, թէ պատահածներէ, և թէ ապագայի պատահելիքներէ:

Կուզե՞ս առկախ և ջփով չմնալ աշխարհածաւալ պատահած դէպքերուն ու պատահելիք իրադարձութիւններուն: Եղի՛ր դերակատարը և ուխտաւոր գինուորեալը Եկեղեցւոյ գործունէութեան:

Հերիք է՞ որ ըլլաս միայն հանդիսատեսն ու ֆինադատը "Եկեղեցին Հայկականի"ն:

ՈՐՈՒՆ ԵՏԵՒ

Ինչպէս իւրաքանչիւր առարկայ իր ետին ջուք մը ունի, նոյնպէս ամէն գործունեութիւն և յաջողութիւն իր ետին, ունի գաղտնիք մը, խորհուրդ մը կամ անձնաւորութիւն մը: Այսպէսով կ'ընթանայ արդի գիտութիւնը իր մեծաբայլ յառաջացման մէջ: Հետազօտող գիտնականներ միջոտ գիտնալ կ'ուզեն արդիւնքի մը ետին գտնուած պատճառը:

ԸՍԿԻՅԻՆ ՄԷՋ Կ'ԻՋՆԷ ԻՆՔԸ ԱՍՏՈՒԱԾ

Աստուած՝ Իր Որդւոյն միջոցով կ'իջնէ, կը խնայրհի, կը Մարդեղանայ և նոյնիսկ Ինքզինք նիւթեղէնի կը վերածէ որպէս Հաց և Գինի:

Ինչո՞ւ:

Աստուած կ'իջնէ քո՛ւ և իմ ինքնութեանը մէջ ու կը բախէ դուրը մեր կամքին և յօժարութեան: Որպէսզի մեզ, կաւէ, հողէ և նիւթեղէն եակները դարձնէ հոգեղէնի ու երկնայինի: Ի՞նչ խորախորհուրդ և իմացական հասունութիւն կը պահանջէ միտքը որ կարենանք ըմբօնել աստուածային այս էջքը մարդաշխարհ, փրկելու կորսուած մարդկութիւնը մեղքի ու չարի ճիրաններէն: Երբ Ա. Նարեկացին և Ծնորհալին չկրցան թափանցել և հասկնալ աստուածային այս անսպառ սիրոյ արարքը, միայն զմայլեցան յափշտակութեամբ ու հոգեկան հարբեցութեամբ: Մենք եւս ձայնակցելով անթառամ սուրբերուն, կրկնենք.

«Հաւատամք 'ի մի Աստուած 'ի Հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի, երեսելեաց և աներեսութից: Եւ 'ի մի սէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ՝ Ծնեալն Յաստուծոյ Հօրէ, Միածին՝ այսինքն յեութենէ Հօր: Աստուած յաստուծոյ, լոյս 'ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ յաստուծոյ ճշմարտէ, Ծնունդ և ոչ արարած: Նոյն Ինքն 'ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս և 'ի վերայ երկրի, երեսելիք և աներեսոյթիք: Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ 'ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն հոգւովն սրբով: Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ, և զամենայն որ ինչ է 'ի մարդ,

Ճշմարտապէս և ոչ կարծեօք: Զարչարեալ խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ ձօր: Գալոց է նովին մարմնովն և փառօք ձօր 'ի դասել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան:

Հաւատամք և 'ի Սուրբ Հոգին՝ յանեղն և 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս: Որ էջն 'ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն, և քնակեցաւ 'ի սուրբսն:

Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և յառաքեալական Սուրբ Եկեղեցի, 'ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, 'ի Բաւութիւն և 'ի թողութիւն մեղաց: Ի Յարութիւն մեռելոց, 'ի դատաստանն յախտենից Հոգւոց և մարմնոց, յարձակութիւնն երկնից և 'ի կեանսն յախտենականս»:

ՈՐՈՒՆ ԱՌՋԵՒ ԳԼԽԱՅԱԿ ԿՈՒ ԳԱՅ ԻՄ ԱԶԳՍ ԱՄԲՈՂՋ

Աստուածութիւնը որքան ալ մարդեղանայ Յիսուսով, որքան ալ մարմնանայ, որքան ալ նիւթին հետ նոյնանայ և Ինքզինք մեր սիրոյն համար մարդկային փորձութիւններու ենթարկէ, Իր աշխարհ ու սկիհ էջֆովն, Իր խոնարհութեան առջեւ, մարդ ոչ թէ կու գայ գլխահակ և գլխիկոր, այլ՝ կու գայ ծունկի և կ'երկրպագէ այն Ներկայութիւնը, կը համբուրէ այն ոտքերը որոնք քալած են այնքան երկար մղոններ փնտռելու որ գտնէ կորուսեալ գառնուկը:

Աստուածային այս անբացատրելի սիրոյ և ողորմութեան առջեւ, մարդ որքան ալ անասնաբարոյ ըլլայ Բայճայուած մեղքերէն, երբ հպումը զգայ Մարդեղեալ Արարչին, կարծես կայծակնահար եղած, նման Զաֆէոսի և Մատթեոսի, կը դառնայ կերպարանափոխ, ոչ թէ միայն պատմուծանի, այլ՝ սրտի, կենցաղի, հոգիի ու ապրելակերպի: Ահա այս է կենդանի ապացոյցը որ սկիհին մէջ կ'իջնէ Ինքն յախտենական Արեւալոյս Աստուածորդին:

ՀԱՂՈՐԳՈՒԻԼ ԱՆՅԵԱԼԻՆ ՀԱՅ ՈՒ ԳԻՆԻՈՎ ԿԵՆՍԱՌՈՂՋ

Հաղորդուիլ՝ կը նշանակէ իրազեկ դառնալ, ճանչնալ մասնակից ըլլալ կամ տեղեկանալ: Բնաւ դիտա՞ծ էք ինչպէս երկու, զիրար սիրողներ, իրարու հետ կը հաղորդուին: Մանաւանդ

ամենակարգնական վայրկեանին կամ ջրջանին: Իրարու սիրոյն կը տեղեկանան ոչ թէ բառերով կամ խօսքով, այլ արտեւանումներով կամ մասներու հպումով մը միայն: Ձիրար հասկնալու ձեւերը ընդհանրապէս առանց խօսելու տեղի կ'ունենան: Ներկայութիւնը կամ ջարժումները երկու անձերու, արդէն գրաւականն է որ այդ անձերը զիրար կրնան սիրել կամ չսիրել:

Նոյնն է նաեւ Յիսուսի հետ հաղորդուիլը և հաղորդակցութիւնը Իր Եկեղեցիին հետ: Յիսուս Քրիստոս կու գայ մեզի որպէս հպում և զգացում չացի և Գինիի նիւթական հպումովը: Երկու տարրեր որ համաշխարհային ուտելիք և ըմպելիք ճանչցուած են: Որ ըսել է, Յիսուս համայն աշխարհի վրայ ամէն տեղ ներկայ է Իր Մարդեղութեամբ ու սրբագործուած հասկացողութեամբ--նիւթականութեամբ:

Քսան դարեր Յիսուսի կանչը եղած է.

***«Եկէ՛ք Ինձի, բոլոր յոգնածներ և բեռնաւոր-
ւածներ, և ես պիտի հանգստացնեմ ձեզ»:***

Ի՞նչ աստուածային անսպառ սէր, խանդաղատանք և անփոփոխ խնամակալութիւն:

ԾՈՎՈՒՆ ԳԻՄԱՅ ԱԼԵԿՈՄ

"Եկեղեցին Հայկական"ը, դարեր շարունակ ապրած է ալեկոծ ծովերու ընդմէջ: Թշնամիները եղած են Յազկերտներ, Մելճուխներ, Թուրքեր և Մոնկոլներ: Ասում տեսանելի ալիքներ են, իսկ չերեւցածները՝ ամբարտաւանութիւն, շահամոլութիւն, անձնասիրութիւն, հաճոյապաշտութիւն. իսկ ամենացաւալին . . . հաւատափոխութիւն՝ հարստութեան սիրոյն:

Քաղաքական և բարոյական փորձանքներն ու փորձութիւնները միշտ անպակաս եղած են հայ ազգին ու Եկեղեցիին գլխէն:

Հայ ժողովուրդը միակ ազգը եղած է, որ շարունակ պաշարուած ըլլալով հանդերձ, օտար և Քրիստոսատեաց կրօնի խուժաններով, կարողացած է պահել իր Եկեղեցին ու իր ժողովուրդին Լոյս Հաւատքը:

ՆԱԻԱՅԱՆԳԻՍՏ Մ'Է ԽԱՂԱՂ

Բոլոր ճամբորդներու հոգեւոր հանգստարան եղած է Եկեղեցին: Միակ սա տարբերութեամբ, որ այս խաղաղ հանգստարանին յատակը ոչ թէ հաստատուն և անջարժ ապարած է, այլ հեղուկ ջուր: Հաւատացեալը փնտռելու չէ *ի՛ր* ապահովութիւնը այս աշխարհի խաբէական ու մոլորանքի մութ ճամբուն մէջ, որուն միայն *մեռ տէր*:

լուսազարդուած է՝ ու խորքը կմախֆներով լեցուն, այլ՝ իր բարոյական և սուրբ կառուցուածքին մէջ փնտտելու է յաւերժականը:

Հաւատացեալը գիտակից ըլլալու է թէ նաւահանգիստը միայն կայարան մըն է կեանքի բանի մը բուսակներու համար: Իր նպատակակէտը արջա՛ւ մըն է հասնելու Երկնաւոր Թագաւորութեան: Այս հոգեկան թիրախ դիտաւորութիւնը կենսաձիր ոյժն ու վառելանիւթն է հաւատացեալին:

Աստուածային կարգախօսը և հրահանգը, նոյնիսկ նաւահանգիստի խաղաղութեան և ապահովութեան շրջանին, կը ջարուսակէ ըլլալ.

«Այթու՛ն կեցե՛ք, հսկեցե՛ք, բանի որ ձեր ոտիքը՝ սասանան, կը մոնչէ առիւծի նման, կը ջրջի և կլլելու հաւար զոն կը փնտռէ Եփրատընցե՛ք անո՛ր հատաստուն ըլլալով հաւասֆի մէջ. գիտցե՛ք որ ձեր եղբայրական միաբանութիւնը, աշխարհի մէջ, իր վրայ կը կրէ չարչարանե՛ներու նոյն փորձութիւնները» - Ա. Պետ. Ե. 8-9:

ՅՈՒՐՏ ԳԻՇԵՐԻՆ՝ ՀՈՒՐ՝ ԵՒ ԲՈՅ

Հայ Եկեղեցւոյ կոչը՝ հանգստութեան, հաճոյասիրութեան կամ զաւեշտութեան հրաւեր մը չէ իր հաւատացեալներուն: "Եկեղեցին Հայկական"ի կանչը՝ զօրակոչ մըն է հաւատարմութեան և հանդիսաւոր դաշինք մը ցմահ: Ուխտ մըն է նմանելու իր Ռահմիլիայ Փրկչին Յիսուսի, որ ըսաւ Իրեն դիմող թուլամորթ դպիրի մը.

«Աղուէսները որջեր ունին, և երկինքի թրոջունները բոյներ, բայց մարդու Ռոդին տեղ մը չ'ունի, որ իր գլուխը դնէ» - Մատթ. Ը. 20:

Այսպիսի՝ Բաջազուն հոգիներ էին հայ հաւատացեալները, որոնց ոչ հուրը և ոչ սուրը կրցաւ վախցնել: Բաջազգի զինուորեալներ էին որոնք մինչեւ մեզի հասցուցին այն Լոյսը, որուն կանթեղը վառած էր Ա. Գրիգոր Լուսաւորիչ, որ ինք եւս բռնկած էր Յիսուսի յաւիտենական սիրոյ Արեւալոյսով:

ՈՒ ՏՕԹԱԿԷՋ ՅԵՐԵԿԻՆ ԱՆՏԱՌ ՄԸՆ Է ԸՍՏՈՒԵՐՈՏ

Թէեւ Յիսուս Զրիստոսի հրաւերը զօրակոչ մըն է նուիրումի և հաւատարմութեան, բայց այս չի նշանակեր որ մեր կեանքերը պիտի զոհենք յիմարաբար կամ անիմաստ նպատակի:

Յիսուս՝ մեր զոհողութեան և հաւատարմութեան համար, մեզի կու տայ բարձրագոյն արժէքը որ աշխարհ երբեք կարենայ տալ իր քաղաքացիներուն:

Յիսուս Իր հետեւորդներուն կու տայ կեանքի *իմաստ* մը, նպատակ մը և աստիճան ոգեշունչ եռանդ: Անկարելի է որ աշխարհ իր բոլոր հարստութիւններով կարենայ վերոյիջեալ երեք բարոյական ուժանակները պարգեւել իր անիրաւ մամոնաներուն:

Յիսուս ոչ միայն այս երեք մեծարժէք և հոգեպարար ուժերը կու տայ Իրեն հետեւողներուն, այլ նաեւ կը խոստանայ յաղթանակ:

«Այս բաները ըսի ձեզի որպէսզի ինձմով խաղաղութիւն ունենաք: Այստեղ, այս աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք, սակայն բազալ երուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհի» --Յով. ԺԶ. 33:

Յիսուս կը շնորհէ մեզ.-

1. Կեանքի նպատակ: Այդ նպատակը իրականացնելու
2. Եռանդ:
3. Խաղաղութիւն, որուն ակնհասեա եղանակ Իր խաչելութեան ընթացքին:
4. Գրաւականը մեր պայքարի յաղթութեան, որ է Իր ծիածանող Յարութիւնը և Բանդումն ու տապալումը գերեզմանին և մահուան:

ՈՒՐ ՇՈՒՇԱՆՆԵՐ ԿԸ ԾԱՂԿԻՆ ՉԱՐԱԿԱՆԻ ԳԵՏԻՆ ՄՕՏ

Շուշանը ծաղիկներու թագաւորութեան մէջ կը պատկերացնէ կուսական անքծութիւն և անարատ անմեղութիւն: Ահա այսպիսի բարձր կոչումի հրաւիրուած է եկեղեցական մը որուն անդամակցիլը, աշխարհականի և հոգեւորականի մը համար, զանազանութիւն չի ճանչնար:

«Չարականի Գետին մօտ» կը նշանակէ թէ՛ այդ աղօթք երաժշտութիւնը տարր մը կամ գիր մը չէ, այլ *կեանք* մը և *ապրում* մըն է նման յորդահոս գետի և ոչ սղմացած լճակի մը: Այս շարականներու մեղեդիները և բառերը պէտք է փոխակերպեն բոլոր հաւատացեալները որոնք կ'երգեհոնեն և կ'ունկնդրեն այս սրբազան աղօթքները: Եթէ սոյն ներիմաց և հոգեպարար շարականները ազդեցութիւն չեն ներգործեր ունկնդիրներուն կեանքին, թերութիւնը փնտռելու է ոչ թէ երգագրութեան մէջ, այլ երգարանութեան:

Արբազան ծարականները վերակենդանացնելու և յորդափոս գետի վերածելու համար, ներշնչելու և ոգեւորելու ենք երգաբանողները: Սուրբ ծարականները երգագրուեցան ու յօրինուեցան ոչ թէ *ճագ* երգեցողութեան նման, այլ՝ երկինքէն շնորհուեցան անոնք Հայ Եկեղեցիին որպէս նուէր ու ժառանգութիւն: Արբակենցաղ դպիրներն ու հաւատացեալ ուխտաւորներ որոնք յօրինեցին ու դաշնաւորեցին աստուածատուր այս գոհար բանաստեղծութիւնները, հետ պահեցողութեան և հետ երկար ժամեր ծունկի վրայ աղօթելով և աղերսելով ստացան զանոնք երկնային հրեջտակաց երգչախումբէն:

Այս անգին ու անմահութեան երաջիսիք մեղեդի ծարականները ոչ թէ կը պարունակեն միայն բառ ու տաղ, այլ՝ թափուն իմաստ և սրբախորհուրդ զօրութիւն: Այս գաղտնի իմաստին ու խորհրդագաց վերացումին ներթափանցելու համար, իւրաքանչիւր հաւատացեալ պարտի բիւրեղանալ իր հոգիին մէջ և դառնալ անանձնական ու ոգեպաշտ: Այն ատեն ունկնդիր մը պիտի ճանչնայ իր ժառանգութեան արժէքները ու մօտենալով Աստուծոյ ու իր հաւատակիցներուն, ինք ալ պիտի ըլլայ ոգեպաշտ շուշան, հոգեկանի ու գաղափարականի սիրահար:

Ուստի՝ մեկնաբանե՛նք ու հասկնալի ընենք աստուածաշունչ մատենագիրներն ու պահուած ձեռագիրները: Լուսաւորե՛նք հայ հասարակութիւնն ու սնուցանենք հոգեւոր անօթիները առաջնորդելով զանոնք փրկարար հոգեփոխութեան-- *«Վերստին Մտու ինչի»*:

ՄԷՆ ՄԻ ՔԱՐԻՆ ՏԱԿ ԳԵՏՆԻ

Ընդհանուր առմամբ, բոլոր եկեղեցիներու քարերուն տակ, կայ մարտիրոս մը կամ վկայ մը Յիսուս Զրիստոսի: Երբ Անգլիոյ Արքեպիսկոպոս Թովմաս Պեֆէթի հակառակորդները զինք սպաննեցին Բէնդրբարրիի Մայր տաճարի խորանին առջեւ, այդ խորանին առջեւի քարերը ստացան խորհրդատուր արժէք:

Հայաստանեայց բոլոր եկեղեցիները, գրեթէ առանց բացառութեան, *«Մէն մի Բարին տակ գետնի»* ունի մարտիրոս մը և վկայ մը: Եկեղեցւոյ սալաշատակի իւրաքանչիւր քարին տակ, կը ննջէ հայ Աբել մը՝ որուն արիւնը փոխանակ բողոքելու և վրէժ պահանջելու, թողութիւն կը խնդրէ Աստուծմէ, իր թշնամիներուն այնպէս ինչպէս իր Փրկիչը Յիսուս ըսաւ.

Հայր ներէ՛ ասոնց, որովհետեւ չեն գիտեր թէ ինչ կ'ընեն:

ԳԵՊԻ ԵՐԿԻՆՔ ԲԱՐՁՐԱՅՈՂ ԳԱՂՏՆԻ ՃԱՄԲԱՅ ՄԸ ՈՒՆԻ

Հայ հաւատացեալ մը երբ դիտէ իր Մայրենի Եկեղեցին ուր Մկրտուած է և Կնքուած, ուր շապիկ հագած ու երգած Ճնորհալիին ծարականները, ուր ընթերցած է Աւետարաններէն, ուր իր ազգականները և սիրելիները բերուած են դագարի մէջ, ուր աղօթած պահուն վերացած է ու երբ իր շրթունքները ընդունած են օրհնուած անմահական Հացն ու Գինին, որպէս շօշափելի ներկայութիւնը իր Փրկչին, այլեւս այդ Բարեղէն հաստատութիւնը և կառուցուածքը՝ չորս պատեր և առաստաղ մը ըլլալէ կը դադրի՝ ու կը վերածուի **խորհուրդի** և Աստուծոյ մատենագրութեան:

Այս Խորհուրդը որ երկինքէն իջած էր երկիր, յայտնելու Աստուծոյ տիեզերական Սէրը, *“դէպի երկինք բարձրացող գաղտնի ճամբայ մը ու նի”* և միջոտ պիտի ունենայ: Ինչո՞ւ, որովհետեւ Եկեղեցին այլեւս դադրած է ըլլալէ նիւթ, և դարձած է ոգի և ուժ: Փոշեթաթախ կաւը հրածարած է իր վիճակէն ու եղած է շնչաւոր և բանաւոր կաւ: Զարն ու մարմարը դադրած են ըլլալէ բազին՝ որուն աստուածները մարդաստեղծ էին, ու դարձած են խորան որուն մէջ իջած է Ինքն Աստուած: Ժամն աղօթքին եղած է դարբնոց՝ մարդը բարեփոխելու և սրբացնելու, յուսահատը Բաջալերելու, հիւանդը բժշկելու և մեղաւորին ներելու:

Այս աննիւթական և անխորտակելի աստուածակառոյց Եկեղեցին է որ ունի գաղտնի ճամբայ, որ դէպի երկինք կը բարձրանայ: Երբ մտնես Եկեղեցի, ոչ թէ Բարը կամ ցեղունը, այլ՝ անոր պատմական և ներկայ յիշատակներն են որ Բեզ կը հմայեն, անոր անտեսանելի Զօրութիւնն է որ ջարունակ ներկայ է, Ան Բեզի կը խօսի՝ և Բեզ կը յիշեցնէ, Բեզ կը լուսաւորէ՝ ու մտածումի երկնակամարդ կ'ընդարձակէ: Գտի՛ր անոր գաղտնի ճամբան:

ՀԱՅ ՀՈԳԻՒՆ ԵՒ ՄԱՐՄՆՈՅՆ

Ի՞նչ զմայլելի է, ի՞նչ բարեբախտութիւն մըն է ունենալ Եկեղեցի մը, միաբանութիւն մը, հոգեկան հիմնարկութիւն մը, որ հետաքրքրուի նաեւ իր հաւատացեալ ժողովուրդին մարմնակա՛ն կարիքներով:

Գիտէ՞ ինչո՞ւ Զարկ Մարքս կրօնքը կոչեց “ժողովուրդի թմրեցուցիչ”ը: Որովհետեւ երբ ան կը գրէր իր Համայնավարական Մանիֆէստօն Անգլիոյ մէջ, իրեն օգնական ունենալով Էնկելզը, այն

օրուան Անկլիֆան Եկեղեցւոյ Արքեպիսկոպոսը ըրաւ յայտարարութիւն մը, որուն մէջ կար սա անհաւատալի խօսքերը, "Եկեղեցւոյ հետաքրքրութիւնը մարդոց *հոգիներուն* համար է, ու ոչ անոնց մարմիններուն": Աոյն խօսքերը յայտարարուեցան որպէսզի դրամատերներ կեղեքեն բանուորները:

Մարմինի և հոգիի այս անշատումը որ ցարդ Ամերիկեան Եկեղեցիներու մէջ կանոնագրութիւն է, իր ակերները գործած է երկար դարեր: Հայ Եկեղեցւոյ հետաքրքրութիւնը մարդ-արարածին համար եղած է ազգին ամբողջականութիւնը՝ քաղաքական, ազգակրօնական, մշակութային և հոգեւորական:

Կուզեմ այստեղ ջեջտել նաեւ այն կէտը որ երբ եկեղեցի մը կորսնցնէ իր մարմնականի և հոգեկանի ծառայութեան հաւասարակշռումը, կրնայ շատ ցաւերով խոցուել իր ժողովուրդը:

Երբ կրօնական առաջնորդներ բշուին և տարուին կարգ մը հոսանքներէ՝ քաղաքական կամ կուսակցական, ու հետաքրքրուին միայն ժողովուրդին մարմնակա՛ն, մշակութային և քաղաքական հարցերով, իրենց գաւնուկները կրնան օտար արօտավայրի հոգեկան ճարակը նախընտրել և իրենց հօտն ու փարախը կորսնցնել: Թող մեր աղօթքը ըլլայ տեսնել հայ հոգեւորականները՝ հոգեւորի և մարմնականի արդար հաւասարակշռումի մէջ:

ՋԸՐԱՅԱՆԳԵՐՁՆ Է ՓԱՅԼՈՒՆ

Մերօրեայ ու մանաւանդ Արեւմուտփի ժողովուրդները, հրաշքներու չեն հաւատար, և Թովմաս Առաքեալի նման տեսնել կ'ուզեն ապացոյց, նախ քան հաւատալնին: Ներկայի հայ ժողովուրդը, հայ եկեղեցիները և հաւատաստեւեւ հայը՝ արդեօք կենդանի ապացոյցները և արժանահաւատ վկայութիւնները չե՞ն Հայ Եկեղեցւոյ փայլուն գրահանդերձին: Եթէ Հայաստանեայց Եկեղեցին՝ իր հոգեւորականներու առաջնորդութեամբ զինած չըլլար հայ շինականը և քաղաքացին լոյս հաւատով, այգալոյսող արդի սփիւռհաճայը անկարելի պիտի ըլլար որ կառուցանէր եկեղեցի, և աղօթէր իր պապերուն Աստուծոյն, և մկրտուէր յանուն Յիսուս Քրիստոսի:

Հայ ազգը չէ կորսնցուցած իր հաւատքը, իր կենսասիրութիւնը, ապագայի յոյսը և անմահութեան երաջիսիքը: Հայ Եկեղեցին ոչ թէ հայ մանուկին մորթը կը մկրտէ, այլ անոր արեան և ինքնութեան բջիջներուն մէջ կ'ամրացնէ Յիսուսի հաւատքը բարբն ու կենցաղը:

Պօղոս Առաքեալ՝ իր նամակներէն մէկուն մէջ, որ գրած էր առ Եփեսացոց Եկեղեցին՝ կը յիշէ գրահանդերձին ճածանչագեղ յատկութիւնները.

«Առէ՛ք Աստուծոյ սպառազինութիւնը... մէջքերնիդ գօտեպընդը ւած ճշմարտութեամբ, հագած արդարութեան զրահները, և կօշիկնիդ անցուցած ձեր ոտներուն՝ պատրաստ խաղարութեան և նետարանին: Այս ամենուն վրայ՝ առէ՛ք հաւատֆին վահանը... և առէ՛ք փրկութեան սաղաքարտը ու Հոգիին սուրերը՝ որ Աստուծոյ խօսքն է»--Չ. 14: Եւ առաւել ըլլալով «սիրոյ և հաւատֆի զրահները»--Ա. Թես. Ե. 8:

Վերոյիշեալ զրահներուն հետաքրքրական և ուշագրաւ իմաստը՝ անոնց ոչ նիւթական ու ոչ մետաղային ըլլալնին է: Փրկարար հոգեփոխութեան բոլոր գէնքերն ալ լուսեղէն են և անոնց գործածութիւնը կը կարօտի *հոգեւոր վարժութեան*:

Ինչպէս աչքով անտեսանելի մանրէներ մտնելով մարդկային մարմնէն ներս գայն կը ֆայֆայեն ու կը նուաճեն, նոյնպէս ալ հոգեղէն զրահները ուժ, մաքարում, խոյանք և կամք արտայայտող պարգեւներ են իւրաքանչիւր հաւատացեալի: Սոյն ճառագայթող աննիւթական շնորհները երբ պարուրեն ուխտապահ և ժառանգորդ հաւատացեալը, ան կը շարունակէ գոյատեւել ոգեկան արժէքներ ստեղծող ուժ և փորձութեան մէջ դառնալ անպարտելի:

ՄԻՆՉ ԻՐ ԽԱՉԵՐՆ ԵՆ ԴԱՇՈՅՆ

Խաչը՝ իր յօրինուածական կերպարանքով կը նմանի դաշոյնի, սակայն իր գործածութեան և իմաստին մէջ, բոլորովին հակադիրն է արիւնահեղ դաշոյնին:

Երբ դիտենք Խաչեալ Յիսուսը Գողգոթայի սարին վրայ, հոն կը նշմարենք աստուածային Մէրը: Ու երբ դիտենք Խաչին ստորոտը, հոն կը տեսնենք ոչ հրեայ մը ու ոչ ալ ֆրիստոնեայ մը, այլ՝ ծնրադիր հեթանոս հռոմէացի հարիւրապետ մը որ կ'ապաջխարէ ու կը դաւանի բարձրաձայն, ըսելով.

«Յիրաւի ասիկայ Որդի Աստուծոյ է»:

Դաշոյնը որ չէր կրցած զգեսնել այս արի հռոմէացին, Խաչը՝ յաղթահարած ու տապալած էր գայն: Ինչ որ բռնութիւնը չէր կրցած նուաճել՝ Մէրը սիրաշահած էր գայն առանց նուաճելու: Ինչ որ յեղափոխութիւնը չէր կրցած գրաւել՝ ֆաղցրութիւնը արդէն իսկ առիւնֆնած էր:

Հայաստեղծ խաչքարերը, որոնց վերոյիշումները, խաչեալ Յիսուս Զրիստոսի, իրենց պատկերով ու զարդերու լեզուով խօսող և ներշնչող կոթողներ են թէ՛ հայրենահայու և թէ՛ սփիւռքահայու սրտին:

ԵՒ ԶԱՆԳԱԿՆԵՐՆ ԵՆ ԲՈՄԲԻՒՆ

Ճակատամարտներու ընթացքին, որ կողմի որ զանգակները հնչեն, յաղթութիւնը այդ կողմին պատկանած կ'ըլլայ: Որովհետեւ պարտուած ճակատի զանգակները արդէն փջրուած և խորտակուած կ'ըլլան: Աշխարհավերջի պատերազմին երբ Երկնային Հրեշտակաց քանակները օգնութեան պիտի հասնին հաւատացեալ փոքրամասնութեան, չարին ամենամեծ զարմանքը այն պիտի ըլլայ, որ պիտի տեսնէ Յիսուսի հաւատարիմները ոչ թէ կրաւորական և հլու դիրքաւորումի մէջ, այլ մարմնացեալ որոտումներ և հրեղէն բոմբիւններ՝ ճշմարտութեան, Իրաւունքի և Յաղթութեան:

ԵՒ ԵՐԳՆ Է ՄԻՃՏ ՅԱՂԹՈՒԹԻՒՆ

Երգը կը պատկանի Բարիին, ճշմարիտին և յաղթականին: Երբ չարը կ'ուզէ երգել կամ կը փորձէ երգել իր յօրինածը միայն աղմուկ կ'ըլլայ: Չարերը երգ չեն կրնար ունենալ, որովհետեւ երգը ներդաշնակութիւն կը պահանջէ ու մեղեդիներու համադրութիւն: Չարը ներդաշնակութիւն չունի:

Եկեղեցւոյ սուրբ և քանաստեղծ մարգարէները և քանահիւսները որոնց ծարականները կ'երգեն, աղօթող հաւատացեալները՝ մեղմօրէն ու քաղցրօրէն, աշխարհավերջի պատերազմին՝ անոնք պիտի որոտան ու ցնցեն աշխարհը երբ իրենց Տէրը, յաւիտենական Արեւալոյս Փրկիչը պիտի յայտնուի ամպերու վրայ որպէս անպարտելի Ազատարար Իր հաւատարիմ Բաշագուններուն և անձնուրաց նահատակներուն: Այ՛ն ատեն "Եկեղեցին Հայկական"ի աղօթքն ու աղերսը պիտի փոխակերպուի **"Երգն Յաղթութեան"** ու որոտածայն պիտի գոչեն համայն հաւատացեալներ:

“Ո՛ւր է ով մահ Բու խայթոցդ և ո՛ւր է ով գերեզման Բու յաղթութիւնդ”:

Դեկտ. 8, 1986
Թորոնթօ

Ալպէր. Նորատունկեան
Հայ-Քրիստոնեայ